

է, որովհետեւ նրա մի-երկու երգերի մէջ այդ բարբառի հետ-
քեր կան: Մինչդեռ եթէ բաց անենք նոյն գրքի 494 երեսը,
կը գտնենք Գ. Ախվերդեանի ծանօթութիւնը, թէ «Ջահիլ-Օղլա-
նը Մոզդոկում բազազ էր, ինքը Թիֆլիսի ծնունդ էր, խաբազ
(կօշկակար) էստատէ Դրիկիւօի տղան էր»: Պարզ է, որ Թիֆ-
լիսեցի աշուղ Ջահիլ-Օղլանը բնակուելով Մոզդոկում, ուր, ինչ-
պէս և հիւսիսային Կովկասի մի շարք քաղաքներում, խօսում
են Հաշտարխանի բարբառով, սովորել է այդ բարբառը,
և իր երգերի մէջ երևում են երկու բարբառների հետքերը:
3) 367 երեսում մի երգի մէջ կայ հետեւալ տողը. «Ոչ
ընդունիմ և ոչ հաճիմ, թէ որ զաշխարհ առնէ Դօն»: Այդ առ-
թիւ նոյն երեսում կայ այս ծանօթութիւնը. «Դուցէ Դանուբ
գետի մասին է խօսքը»: Դօն բառը աշուղին պէտք է եկել ոտի
համար, որովհետեւ յանգն այդ է պահանջում: Երգի մէջ ոչինչ
չկայ, որ Դանուբի (Дунай) մասին լինի խօսքը: 4) 385 երեսում
մի երգի մէջ կայ «բանդիւան» բառը: Այդ ոտանաւորի մէջ,
ինչպէս աշուղները սովորութիւն ունեն, ասողի անունը չկայ,
որ և առիթ է տուել խմբագրութեան ասելու, որ «բանդիւան»
բառի վրայ հիմնուած մի թիւրիմացութիւն է, թէ երգը Իվանէ
աշուղին է վերագրուած: Եթէ «բանդիւան» բառը յատուկ է
միայն աշուղ Իվանէին, որպէս կարծում է խմբագրութիւնը,
հապա ուրեմն դա ամենալաւ ապացոյցն է, որ երգը Իվանէինն
է և ոչ ուրիշինը:

Առանձին իմաստ չկայ երգերը բարբառների բաժանել: Գրե-
քում չի տուած աշուղների թէկուզ համառօտ կենսագրութիւն և
ժամանակագրութիւն. չկան աշուղների, երգերի ցանկերը. չկայ
երգերի ըստ բովանդակութեան ցանկ. չէ ասուած, թէ որ
երգերն են նոր տպագրութեամբ լոյս տեսնում. ոչ մի տեսու-
թիւն չկայ, որ բացատրէր աշուղների արժէքը և ցոյց տար, թէ
ինչ բան աւելի է գրաւել հայ աշուղին: Մի խօսքով կարելի է
ասել, որ խմբագրութիւնն ստացել է «...ձեռագիր ժողովածու-
ների մի կոյտ... խմբագրելու...», սակայն առանձին հոգ չի
տարել որոշ կարգ ու սխտեմ մտցնելու այդ կոյտի մէջ: Գրքի
գլխաւոր արժանիքը բառարանն է, որ կցուած է վերջում:

Ա. Վ. Ղ.

ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐԻՔՆԵՐ

- 1) Յովհաննէս Թումանեան՝ «Բանաստեղծութիւններ», Թիֆ-
լիս, 1903, գ. 3 բուրլի.

- 2) Գիւլ Դը-Մոպասան՝ «Գեղեցկուհու խոստովանութիւնը», Թարգմ. Ե. Տ.-Յ., Բագու, 1903, գ. 10 կ.
- 3) Ն. Նեպլիւկա՝ «Ի՞նչ է ճշմարտութիւնը», Թարգմ. Մ. Վ., Վաղարշապատ, 1903, գ. 10 կ.
- 4) Սանտերի Ինգման՝ «Անպոչ հորթը», Թարգմ. Յ. Ստ., Բագու, 1903, գ. 2 կ.
- 5) Բակուրան՝ «Կիպրոս կղզի», Նիկոսիա, 1903, գ. 1 ֆր. 25 սանտ.
- 6) И. Г. Алибеговъ: «Народное образование на Кавказѣ», Тифлисъ, 1903 г.
- 7) А. И. Сааковъ: «О необходимости введенія земскихъ учреждений въ Закавказьѣ», Тифлисъ, 1903 г.
- 8) Յովակիմ Սոլովեան՝ «Հարազատ գծեր», ա. պրակ, Ս.-Պետերբուրգ, 1903, գ. 15 կ.
- 9) Վ. Փափազեան՝ «Ասպետ» (պատմուածք), Թիֆլիս, 1903, գ. 15 կ.
- 10) Վ. Փափազեան՝ «Թռչող խոզը» (գրոյց), Բագու, 1903, գ. 3 կողէկ.
- 11) Մ. Ղազարեանց՝ «Այնտեղ էլ, այստեղ էլ», Պետերբուրգ, 1903, գ. 10 կ.
- 12) Ստրախով՝ «Հոգեբանութեան հիմնական գաղափարների մասին», Թարգմ. ոռւսերէնից, խմբագրութեամբ Ս. Տիգրանեանի, Վաղարշապատ, 1903, գ. 40 կ.
- 13) Բ. Նոտեմսկի՝ «Բերեկա» (գրոյց), Թարգմ. Ա.-Դո, Պետերբուրգ, 1903, գ. 3 կ.
- 14) Մ. Թառայեան՝ «Թագնուած կայծեր», դրամա, Բագու, 1903, գ. 1 ր. 25 կ.
- 15) Մ. Թառայեան՝ «Շիլլէր», I և II հատորներ, Ս.-Պետերբուրգ, 1903, իւրաքանչիւր հատորի գինն է 1 ր. 50 կ.
- 16) Մ. Տ.-Աւագեան՝ «Մանուշակ», Ալեքսանդրովի, 1903, գ. 20 կ.
- 17) Անդերսընի «Հէքիաթները», ֆրանս. Թարգմ. Տ. Զաւէն, Թիֆլիս, 1904, գ. 50 կ.
- 18) *) Շիրվանզադէ՝ «Արտիստը», Թիֆլիս, 1903 գ. 15 կ.
- 19) *) Շահրիար՝ «Եղօի քոռ բախտը», Թիֆլիս, 1903, գ. 3. կ.

*) Այս գրքոյկները, ինչպէս և առաջ ապուած «Կեանքի դասը» արտատպուած են «Մուրճ» ամսագրից, սակայն պ. հրատարակիչները այնքան բարեխղճութիւն չեն ունեցել, որ գրքոյկները վրայ նշանակեն «արտատպուած «Մուրճ»-ից խօսքերը»:

20) Բ. Կարա-Մուրզայի մշակած «Հայկական երգերը», ներդաշնակեց պիանոի համար Լէօնիդ Կնինա: Տետր Ա. ա) Իտալացի աղջկայ երգը, բ) Արաքսի արտասուքը, գ) Դուզիվ խնդրես, դ) Ալագեազ-Էջմիածին, ե) Հօյ, նազանում, զ) Լէպ հօ, լէ, լէ, է) Զիմ վզի, ը) Զան, գիւլում, թ) Որ մահկանացուն և ժ) Վանեցոց խրախոյսը: Մոսկվա, գ. 1 ըտերի:

21) Д-ръ В. М. Арпруни: „Краткое популярное сочинение о холерѣ“, Тифлисъ, 1903.